ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԱՀԻՏ ՀՐԱՆՏԻ ԽԼՈՊՈՒՉՅԱՆ

ԶԱԽԼԻԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ն.Կ.Հարությունյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ.Ա.Մարդոյան** մանկավարժական գիտությունների թեկնածու **Ա.Ա.Տիգրանյան**
Առաջատար կազմակերպություն՝	Վանաձորի Հովի.Թումանյանի անվան պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հունվարի 23_-ին՝ ժամը 14^{00}-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի մանկավարժության 058 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0025, Երևան, Աբովյան $52^{ա}$, ԵՊՀ 8-րդ մասնաշենք, թիվ 208 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 23.12.2025 թվականին:

058 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Ա.Փ.Ղազարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Թեմայի արդիականությունը:</u>

Հանրակրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներն ու արդիականացման գործընթացները պահանջում են անհատական մոտեցում յուրաքանչյուր երեխայի զարգացման նկատմամբ՝ հաշվի առնելով նրա առանձնահատկությունները: Այս համատեքստում, հատկապես կարևոր է երեխայի անհատականության պահպանման և զարգացման խնդիրը, որը պետք է դառնա կրթության ոլորտի առաջնահերթություն:

Ներկայումս կրթության համակարգերն ու զարգացման ռազմավարությունները միտված են կրթել և դաստիարակել առողջ և հավասարակշռված անձնավորություններ, որոնք կկարողանան արձագանքել փոփոխվող պահանջներին ու մարտահրավերներին: Դպրոցի առջև ծառացած հիմնական խնդիրներից մեկը սոցիալ-մանկավարժական հարմարման գործընթացների բարելավումն է, հատկապես նրանց համար, ովքեր բախվում են տարբեր դժվարությունների: Ձախլիկ երեխաների համար սոցիալական հարմարման խնդիրները հաճախ ավելի բարդ են, քանի որ նրանք առնչվում են ոչ միայն ուսումնական, այլև սոցիալական, հոգեբանական ու միջանձնային հաղորդակցման դժվարությունների:

Ժամանակակից մանկավարժության տեսության մեջ, որտեղ առաջնահերթ է աշակերտի անհատականության և հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը, ձախլիկ երեխաների համար անհրաժեշտ են հատուկ ուսուցողական և դաստիարակչական մոտեցումներ, որոնք հաշվի կառնեն նրանց առանձնահատկությունները:

<u>Հետազոտության նպատակը:</u>

Հետազոտության նպատակն է հանգամանորեն ուսումնասիրել և վերլուծել ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում՝ բացահայտելով հարմարման գործընթացի վրա ազդող գործոններն ու պայմանները:

<u>Հետազոտության առաջադիր խնդիրներն են՝</u>

1. Մեկնաբանել ձախլիկությունը որպես կենսագենետիկական և սոցիալական երևույթ:
2. Սահմանել ձախլիկության առանձնահատկությունները որպես սոցիալ-մանկավարժական հարմարման խնդրի բաղադրիչ:

3. Ուսումնասիրել և վերլուծել ձախլիկ երեխաների սոցիալական հարմարման խնդիրն ընտանիքում:
4. Ուսումնասիրել և վերլուծել ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման ընթացքը հանրակրթական դպրոցում:
5. Վերլուծել ձախլիկ սովորողների ուսուցման առանձնահատկությունները և կիրառվող մոտեցումները դպրոցում:
6. Դիտարկել և հիմնավորել այն սոցիալ-մանկավարժական պայմանները, որոնք նպաստում են ձախլիկ երեխաների արդյունավետ ինտեգրմանը աշակերտական միջավայր:
7. Իրականացնել սոցիոլոգիական հարցումներ ձախլիկների սոցիալ-մանկավարժական հարմարման խնդիրների վերաբերյալ և կատարել արդյունքների վերլուծություն:

<u>Պաշտպանության ներկայացվող դրույթները:</u>

1. Ձախլիկության «սոցիալ-մանկավարժական հարմարում» հասկացության էությունը դիտարկվում է որպես երեխայի զարգացման և ինքնակազմակերպման գործընթաց կրթության և դաստիարակության միջավայրում:

2. Ձախլիկ աշակերտների ապահարմարման հիմնական գործոններն ընդգրկում են ֆիզիոլոգիական ասպեկտները՝ հոգեկան գործունեության խանգարումները, որոնք հանգեցնում են պաթոլոգիկ ձախլիկության:

3. Հոգեբանական մակարդակով առանձնացված բարձր զգացմունքայնություն, զգայունություն և անհանգստություն երևույթները բնութագրում են ձախլիկ երեխաներին՝ ներառելով հոգեբանական լարվածություններ, դպրոցական նևրոզներ և վախեր:

4. Սոցիալ-մանկավարժական գործոնները վերաբերում են ուսուցման գործընթացում առաջացող դժվարություններին, միջանձնային հաղորդակցման պակասին, սոցիալական խոչընդոտներին և ոչ կառուցողական ընտանեկան միջավայրին: Այս գործոնների գիտակցումը և դրանց հաշվի առնելը հնարավորություն է տալիս ստեղծել նպաստավոր պայմաններ ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման համար:

5. Ձախլիկ երեխաների դպրոցում սոցիալական հարմարման սոցիալ-մանկավարժական պայմանները ներառում են հարմարման գործընթացի կառավարման և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև անհատականացված և տարբերակված մոտեցումների

կիրառություն ձախլիկ երեխաների ուսուցման ու դաստիարակության գործընթացում:

6. Հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքները փաստում են ձախլիկ աշակերտների սոցիալ-մանկավարժական հարմարման մակարդակը ժամանակակից հանրակրթական դպրոցում:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Հետազոտության գիտական նորույթը ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման հիմնախնդրի համապարփակ վերլուծությունն է:

2. Հետազոտության ընթացքում իրականացվել է իրավիճակի ընթացիկ գնահատում, խորությամբ ուսումնասիրվել են հարմարման դժվարությունները և դրանց սոցիալական, հոգեբանական և մանկավարժական դրսևորումները:

3. Սոցիոլոգիական հարցումների արդյունքների համադրմամբ՝ հաստատվել են տեսական հետազոտությունների եզրակացությունները, որոնք հնարավոր են դարձրել հիմնավորել ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման մեխանիզմները և առանձնահատկությունները:

Հետազոտության տեսական նշանակությունը:

Հանգամանորեն ուսումնասիրվել և վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական, գիտատեսական սկզբնաղբյուրները՝ ներկայացնելով տարբեր հեղինակների տեսակետները, դրանց տալով մեր մոտեցումները:

Հետազոտության գործնական նշանակությունը:

Բացահայտված մանկավարժական առանձնահատկությունները և ձախլիկ սովորողների մեր կողմից ներկայացված արդյունավետ հարմարման պայմանները, ատենախոսության մեջ հիմախնդրի հանգամանորեն վերլուծված նյութը կարող են ծառայել որպես ուղեցույց ուսուցիչների համար՝ մշակելու ձախլիկ սովորողների վերաբերյալ սոցիալ-մանկավարժական աջակցության ծրագրեր, ինչպես նաև լինել սկզբնաղբյուր հիմնախնդրով հետաքրքրվողների համար:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, 31 աղյուսակներից, 31 գծապատկերներից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ծավալը կազմում է 151 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության կառուցվածքն ու ծավալը:

Առաջին գլուխը, վերնագրված **«Ձախլիկությունը որպես կենսագենետիկական և սոցիալական երևույթ»**, ամփոփված է 6 ենթագլխում:

Առաջին ենթագլխում, որի վերնագիրն է **«Տեսական պատկերացումներ ձախլիկության և դրա առաջացման պատճառների մասին»**, ձախլիկությունը ներկայացված է որպես համապարփակ երևույթ, որի ուսումնասիրությունը պահանջում է ինտեգրատիվ մոտեցում՝ ներառելով ինչպես կենսաբանական, այնպես էլ հոգեբանական և սոցիալ-մանկավարժական գործոնների համադրական վերլուծություն: Նման բազմակողմանի մոտեցումը հնարավորություն է տալիս ոչ միայն խորապես հասկանալու ձախլիկության բնույթը, այլև մշակելու արդյունավետ մոտեցումներ՝ աջակցելու ձախլիկ անձանց լիարժեք ներառմանը կրթական և սոցիալական միջավայրերում:

Երկրորդ ենթագլխում, որի վերնագիրն է **«Ձախլիկության դրսևորման կենսագենետիկական հիմքերը. ժառանգականություն»**, հիմնավորված է, որ ժառանգականությունը կարևոր, սակայն ոչ միակ գործոնն է ձախլիկության ձևավորման հարցում: Ձախլիկությունը պետք է դիտարկվի որպես բարդ կենսաբանական և գենետիկ համակարգերի փոխազդեցության արդյունք, որն արտահայտվում է անհատական նյարդահոգեբանական տարբերակով:

Երրորդ ենթագլխում, վերնագրված՝ **«Միջավայրի դերակատարումը և դաստիարակության դերը ձախլիկության դրսևորման հարցում»**, ներկայացված և հիմնավորված է, որ սոցիալական միջավայրը ձախլիկության դրսևորման հարցում հանդես է գալիս ոչ թե որպես պասիվ բաղադրիչ, այլ որպես ակտիվ ազդեցության համակարգ՝ ունակ պայմանավորելու ինչպես տվյալ առանձնահատկության ձևավորման ուղղվածությունը, այնպես էլ դրա սոցիալական ընկալումն ու ընկալման մակարդակը տարբեր համատեքստերում:

Չորրորդ ենթագլխում, որի վերնագիրն է **«Ձախլիկ երեխաների հոգեբանական առանձնահատկությունները»**, ներկայացված և վերլուծված են ձախլիկ երեխաների հոգեբանական առանձնահատկությունները և դրանց հիման վրա կրթական ու սոցիալական միջամտությունների ձևավորման մոտեցումները: Որպես բազմաշերտ երևույթ՝ ձախլիկության ուսումնասիրությունը չի կարող սահմանափակվել զուտ նեյրոֆիզիոլոգիական բացատրություններով. այն ենթադրում է ներառել նաև սոցիալ-մշակութային, կրթական և հոգեբանական ընկալումների ամբողջական համադրումը:

Հինգերորդ ենթագլխում՝ «Ձախլիկության դրսևորման սոցիալ-մանկավարժական առանձնահատկությունները», հանգամանորեն ներկայացված և վերլուծված են ձախլիկության դրսևորման սոցիալ-մանկավարժական առանձնահատկությունները, դրանց կարևորությունը, ինչպես նաև դրանց հիման վրա կառուցված համակարգային մանկավարժական միջամտությունները՝ ներառական կրթության հիմնարար սկզբունքներն իրականացնելու համար: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ապահովել յուրաքանչյուր երեխայի լիարժեք զարգացում, ինքնաարտահայտում և հավասար իրավունքների ապահովում կրթական գործընթացում՝ անկախ նյարդաբանական կամ շարժողական առանձնահատկություններից:

Վեցերորդ ենթագլխում, որի վերնագիրն է **«Ձախլիկության երևույթը խորհրդային մանկավարժության մեջ»**, ներկայացված են ԽՍՀՄ-ում ձախլիկության հանդեպ քաղաքական մոտեցումները. դրանք արտացոլում էին ժամանակի սոցիալ-գաղափարական պահանջներն ու վերահսկողության մեխանիզմները, որոնք հակասում էին երեխաների անհատական զարգացման բնական ընթացքին: Գիտական մոտեցումների առաջընթացի շնորհիվ այսօր ընդունվում է, որ ուսումնական և սոցիալական միջավայրերը պետք է հարմարվեն ձախլիկ երեխաների առանձնահատկություններին՝ ապահովելով նրանց լիարժեք ներառում և հոգեկան առողջության պահպանություն:

Երկրորդ գլուխը՝ «Ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման առանձնահատկությունները» վերնագրով, ամփոփված է 5 ենթագլխում:

Առաջին ենթագլխում, որի վերնագիրն է **«Սոցիալ-մանկավարժական հարմարում, նրա էությունը»**, ներկայացված են «Հարմարում» եզրույթի տերմինաբանական և լեզվաբանական մեկնությունները, դրա սահմանման տարբերակները, վերլուծված են սոցիալ-մանկավարժական հարմարման առանձնահատկությունները: Սոցիալ-մանկավարժական հարմարումը միաժամանակ և՛ գործընթաց

է, և՛ արդյունք, որի միջոցով երեխան ինտեգրվում է հասարակության տարբեր համակարգերում՝ կրթական, ընտանեկան և ընկերային միջավայրերում: Այն արտացոլում է ոչ միայն միջավայրի պահանջներին ենթարկվելը, այլև գիտակցված մասնակցությունը և ներքին ինքնափոփոխությունը:

Երկրորդ ենթագլխում՝ վերնագրված **«Սոցիալ-մանկավարժական հարմարումը ձախլիկության ֆենոմենի տեսանկյունից»**, ներկայացված և հանգամանորեն վերլուծված է, որ սոցիալ-մանկավարժական հարմարումը ձախլիկության ֆենոմենի համատեքստում բազմաչափ և ներառական գործընթաց է, որը պահանջում է կենսաբանական, հոգեբանական և սոցիալական մոտեցումների համատեղում: Մեր վերլուծությունները փաստում են, որ ձախլիկ երեխաների արդյունավետ սոցիալ-մանկավարժական հարմարումը կախված է ինչպես միջավայրի աջակցող և ադապտացնող առանձնահատկություններից, այնպես էլ անձի հոգեբանական և մտավոր կարողությունների ուսումնասիրված և ուղղորդված զարգացումից:

Երրորդ ենթագլխում, որի վերնագիրն է **«Ձախլիկ երեխաների սոցիալական հարմարման խնդիրն ընտանիքում»**, ներկայացրել ու վերլուծել ենք ընտանիքում ձախլիկ երեխաների առջև ծառացած սոցիալական հարմարման խնդիրները: Ընտանեկան միջավայրում ձախլիկությունը պետք է ընկալվի որպես բնական և առանձնահատուկ տարբերակ, ծնողները պետք է ըմբռնեն և հարգեն երեխայի նյարդահոգեբանական և շարժողական առանձնահատկությունները՝ ստեղծելով աջակցող միջավայր:

Չորրորդ ենթագլխում՝ վերնագրված **«Ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման գործընթացը դպրոցում»**, ներկայացված ու համակողմանիորեն վերլուծված են «դպրոց» սոցիալական ինստիտուտում ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման գործընթացում առաջացած դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները: Ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարումը դպրոցում ենթադրում է ոչ միայն երեխայի հարմարումը ուսուցման գործընթացին, այլև դպրոցի՝ իր ամբողջ կրթական համակարգով արձագանքը նրա անհատական առանձնահատկություններին, հետաքրքրություններին, գիտելիքներին և հմտություններին: Հարմարվողականությունը երկկողմանի գործընթաց է, որի ընթացքում սովորողը հարստացնում է իր կրթական փորձը, իսկ դպրոցը ձևավորում է հնարավորություններ անհատական տարբեր պահանջներին պատասխանելու համար:

Հինգերորդ ենթագլխում, որի վերնագիրն է **«Ձախլիկ երեխաների ոչ արդյունավետ սոցիալ-մանկավարժական հարմարման գործընթացի թողած հետևանքները և դրանց շտկումները»**, վերլուծվել են ձախլիկ երեխաների ապահարմարման խնդիրները, որոնք պահանջում են համակարգային մոտեցում՝ ներառելով ինչպես ընտանեկան, այնպես էլ կրթական ինստիտուտները: Ձախլիկ երեխաների մոտ արդեն առաջացած ապահարմարումը հնարավոր է շտկել միայն համադրական մոտեցման շնորհիվ՝ կապակցելով ուսուցչի պրոֆեսիոնալ վերաբերմունքը, ընտանիքի աջակցությունը, մասնագիտական միջամտությունը և ներառական միջավայրի ձևավորումը:

Երրորդ գլխում, վերնագրված **«Հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն»**, սոցիոլոգիական հարցումները իրականացվել են 2022-2025 թվականներին Հայաստանի հանրապետության տարբեր մարզերի հանրակրթական դպրոցներում: Սոցիոլոգիական հարցումներին մասնակցել են 273 ռեսպոնդենտ, որից 173 ձախլիկ աշակերտ, 68 ուսուցիչ, 32 ծնող:

Կազմվել է 3 առանձին հարցաթերթիկ՝ աշակերտների, ուսուցիչների և ծնողների համար: Սոցիոլոգիական հարցումներն անանուն են եղել: Որպես աշակերտ-ռեսպոնդենտ ընտրվել են միջին և ավագ դպրոցի աշակերտները՝ շատ լավ գիտակցելով, որ գրաճանաչության գործընթացը՝ գրուսուցումը և թվերի ուսուցումը սկսվում են տարրական դպրոցում: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ I-IV դասարանների աշակերտներն ինքնուրույն չէին կարողանա կարդալ և ճիշտ ընկալել հարցաթերթիկի հարցերի բովանդակությունը և նրա հավանական պատասխանները, որոշեցինք սոցիոլոգիական հարցումներն իրականացնել միջին և ավագ դպրոցներում:

Հաշվի առնելով ձախլիկության ուսումնասիրության ոլորտում կիրառվող մեթոդաբանական բազմազանությունը, այս հետազոտությունը տվյալների հավաքագրման տեսանկյունից դասվում է բնութագրական, իսկ նպատակային հարթությունում՝ կիրառական հետազոտությունների շարքին: Հիմնական հետազոտական գործիքը հանդիսանում է հարցաթերթը:

Հավաստիության քանակական գնահատումն իրականացվել է Քրոնբախի ալֆայի միջոցով, որի արդյունքը կազմել է 0.90՝ վկայելով գործիքի բարձր ներքին համահունչության մասին:

Ընդհանուր առմամբ, մասնակցել է 273 ռեսպոնդենտ ՀՀ 6 մարզերից և Երևան քաղաքից: Հարցումներն անցկացվել են 28 հանրակրթական դպրոցում, որոնց բաշխվածությունն ըստ մարզերի ներկայացված է ստորև՝

Աղյուսակ 1. **Սոցհարցման ռեսպոնդենտների բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի**

Մարզեր	Երևան	Լոռի	Տավուշ	Արմավիր	Արագածոտն	Սյունիք	Ընդամենը
Ռեսպոն-դենտների թիվ	91	58	27	38	39	20	273
Տոկոս	33,33%	24,94%	9,89%	13,91%	17,28%	7,32%	100%

Աղյուսակ 2. **Սոցհարցման 3 խումբ ռեսպոնդենտների բաշխվածությունն ըստ մարզերի**

Մարզեր	Երևան	Լոռի	Տավուշ	Արմավիր	Արագածոտն	Սյունիք	Ընդամենը
Ձախլիկ սովորող	67 38,72 %	30 17,34%	15 8,67%	25 14,45%	24 13,87%	12 6,93%	173
Ուսուցիչ	18 26,47 %	16 23,52%	8 11,76%	9 13,23%	10 14,70%	7 10,29%	68
Ծնող	6 18,75%	12 37,5%	4 12,5%	4 12,5%	5 15,62%	1 3.125%	32

Աղյուսակ 3.**Սոցհարցման մասնակիցների բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի**

Տարիք	10-17	25-56	Ընդամենը
Քանակ	173	100	273
Տոկոս	63.37 %	36.63 %	100%

Աղյուսակ 4.**Սոցհարցման մասնակից ձախլիկ սովորողների բաշխվածությունն ըստ սեռի**

Սեռ	Արական	Իգական	Ընդամենը
Քանակ	98	75	173
Տոկոս	56,64%	43,35%	100%

Աղյուսակ 5**. Սոցհարցման մասնակից ձախլիկ սովորողներն ըստ հանրակրթական դպրոցի կրթական աստիճանի**:

Հանրակրթական դպրոց	Հիմնական դպրոց	Ավագ դպրոց	Ընդամենը
Քանակ	149	24	173
Տոկոս	86,12%	13,87%	100%

Սոցիոլոգիական հարցման հարցաշարից ներկայացվում է երեք հարց՝ դրանց պատասխանների վերլուծությամբ:

Ձախլիկ երեխաների հարցաթերթի 3-րդ հարց.

Հարց3.Ձախլիկությունը ստեղծու՞մ է դժվարություններ ուսումնական գործընթացում:

Աղյուսակ 6.

Հավանական պատասխաններ	Մասնակիցների քանակ	Տոկոս
ա/ Այո	71	41,04%
բ/ ոչ	38	21,96%
գ/ երբեմն	64	36,99%

Ի պատասխան այս հարցին՝ ձախլիկ սովորողների զգալի մասը (41,04%) հաստատել է, որ ձախլիկությունը խոչընդոտում է իրենց ուսումնական գործընթացում: Սա վկայում է այն մասին, որ չնայած

ժամանակակից դպրոցներում ձախլիկների նկատմամբ վերաբերմունքը փոխվել է, այնուամենայնիվ ուսումնական միջավայրը լիարժեք հարմարեցված չէ նրանց կարիքներին: 36,99%-ը նշել է, որ դժվարությունները երբեմն են դրսևորվում, ինչը ցույց է տալիս, որ որոշ իրավիճակներում (օրինակ՝ գրավոր աշխատանքներ, ուսումնական սեղանի դիրք, ձեռքի շարժումների կոորդինացիա և այլն) ձախլիկ լինելու հանգամանքը կարող է խանգարել արդյունավետ ուսուցմանը:

Միայն 21,96%-ն է նշել, որ որևէ դժվարություն չի զգացել, ինչը հուշում է, որ այդ երեխաները կարող են լինել ավելի լավ հարմարված կամ նրանց դպրոցական միջավայրը եղել է ավելի ներառական և խթանող:

Տվյալները ընդգծում են անհրաժեշտությունը՝ ապահովելու ուսումնական միջավայրի առավել լիարժեք հարմարեցում ձախլիկ երեխաների կարիքներին՝ ներառյալ դիդակտիկ նյութերի, գրելու մեթոդիկայի, ինչպես նաև աշակերտական նստարանների դասավորման և գրաֆիկական գործիքների ճիշտ ընտրության միջոցով: Նման միջոցառումները կնպաստեն ձախլիկ սովորողների ուսումնական գործընթացում ներգրավվածությանը և հաջողության բարձրացմանը:



Գծապատկեր 3. Ձախլիկությունը ստեղծո՞ւմ է դժվարություններ ուսումնական գործընթացում

Ուսուցիչների հարցաթերթի 5-րդ հարց

Հարց 5. Արդյո՞ք, ձախլիկ երեխայի առանձնահատկություններն ազդում են նրա սոցիալականացման և հասարակություն ինտեգրվելու վրա:

Ուսուցիչների պատասխանը թիվ 5 հարցին

Հավանական պատասխաններ	Մասնակիցների քանակ	Տոկոս
ա/այո	47	69,11%
բ/ ոչ	9	13,23%
գ/ դժվարանում եմ պատասխանել	10	14,70%

Ուսուցիչներին տրված «Արդյո՞ք, ձախլիկ երեխայի առանձնահատկություններն ազդում են նրա սոցիալականացման և հասարակություն ինտեգրվելու վրա» հարցի պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ մեծամասնությունը՝ 69.11%, համոզված է, որ ձախլիկ լինելու հանգամանքը կարող է անդրադառնալ երեխայի սոցիալականացման գործընթացի վրա:

Սա վկայում է, որ ուսուցիչների զգալի մասը տեսնում է սոցիալական ու կրթական դժվարությունների ռիսկեր, որոնց կարող են բախվել ձախլիկ երեխաները՝ պայմանավորված ոչ միայն նրանց նյարդաֆիզիոլոգիական առանձնահատկություններով, այլև կրթական գործընթացի ոչ համարժեք կազմակերպմամբ:

Միևնույն ժամանակ, 9-ը ուսուցիչ՝ 13.23%-ը, կարծիք է հայտնել, թե ձախլիկությունը որևէ ազդեցություն չունի սոցիալականացման վրա: Այս տեսակետը կարող է բխել այդ ուսուցիչների դասավանդման փորձից, որտեղ նրանք, գուցե, չեն նկատել էական դժվարություններ կամ ունեցել են լավ հարմարված ձախլիկ սովորողներ: Իսկ 10 ուսուցիչ՝ 14.70%-ը նշել է, որ դժվարանում է պատասխանել, ինչը վկայում է թեմայի վերաբերյալ ինֆորմացիայի պակասի կամ հստակ մեթոդաբանական ուղենիշների բացակայության մասին:

Սա ևս մի փաստարկ է այն անհրաժեշտության օգտին, որ ուսուցիչները պետք է ունենան համապատասխան տեղեկատվություն և անցնեն վերապատրաստում՝ ձախլիկության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ:

Այս տվյալները փաստում են, որ ուսուցիչների մեծ մասն ընդունում է, որ ձախլիկության փաստը պետք է դիտարկել ոչ միայն ֆիզիոլոգիական, այլ նաև սոցիալ-հոգեբանական տեսանկյունից, ինչը կարևոր է համարժեք մանկավարժական միջամտությունների նախագծման համար:



Գծապատկեր 5. Արդյո՞ք ձախլիկ երեխայի առանձնահատկություններն ազդում են նրա սոցիալականացման և հասարակություն ինտեգրվելու վրա:

Ծնողների հարցաթերթի 6-րդ հարց

Հարց 6. Ինչպիսի՞ն է Ձեր կարծիքը, ձախլիկներն ընտանիքում հատուկ մոտեցման կարիք ունե՞ն:

Աղյուսակ 6

Հավանական պատասխաններ	Մասնակիցների քանակ	Տոկոս
ա/այո	14	43,75%
բ/ոչ	6	18,75%
գ/հազվադեպ	7	21,88%
դ/երբեմն	5	15,62%

14 ծնող՝ 43,75%-ը ընդգծում է, որ ձախլիկ երեխաներին ընտանիքում հատուկ մոտեցում անհրաժեշտ է, ինչը վկայում է ծնողների զգայունության և պատրաստակամության մասին՝ ապահովելու իրենց երեխաների աջակցությունը: 6 ծնող՝ 18,75%-ը, չի տեսնում նման անհրաժեշտություն, իսկ մնացածները՝ 37%-ը, տարբեր աստիճանի համաձայնություն են արտահայտում՝ «հազվադեպ» կամ «երբեմն»

առանձնահատուկ մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտության վերաբերյալ: Այս արդյունքները փաստում են, որ ձախլիկ երեխաների հատուկ հոգածության և աջակցման հարցում ծնողների մոտ առկա են տարբեր մոտեցումներ, ինչը կարող է պայմանավորված լինել իրենց ունեցած տեղեկատվության մակարդակով կամ անձնական փորձով:



Գծապատկեր 6. Ինչպիսի՞ն է Ձեր կարծիքը, ձախլիկները ընտանիքում հատուկ մոտեցման կարիք ունե՞ն:

Առաջարկություններ

- Ձախլիկ երեխաների նկատմամբ մոտեցումների տարբերակում,
- դպրոց-ընտանիք համատեղ ծրագրերի մշակում,
- ուսուցման անհատականացում,
- ուսուցիչների շարունակական վերապատրաստում, /մասնագիտական իրազեկում/,
- ծնողական կրթություն,
- միջավայրի զգայական հարմարեցում:

Ամփոփելով, կարելի է նշել, որ առաջարկված միջոցառումները՝ ձախլիկ աշակերտների նկատմամբ մոտեցումների բազմազանեցումը, ուսուցիչների շարունակական վերապատրաստումը, ծնողական կրթության կազմակերպումը և համատեղ ծրագրերի մշակումը ոչ միայն կնպաստեն ձախլիկ երեխաների արդյունավետ ինտեգրմանը ուսումնական միջավայր, այլև կստեղծեն պայմաններ նրանց ճանաչողական, սոցիալական և ստեղծագործական կարողությունների համալիր զարգացման համար, ինչպես նաև կապահովեն անհատականացման և ներառականության սկզբունքների իրականացման լայն հեռանկարներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանգամանորեն ուսումնասիրելով և վերլուծելով «Ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարումը հանրակրթական դպրոցում» մեր թեկնածուական ատենախոսության թեման, եկել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ձախլիկությունը կենսագենետիկական տեսանկյունից կարելի է դիտարկել որպես ուղեղի կիսագնդերի ֆունկցիոնալ ասիմետրիայի և ժառանգական գենետիկական գործոնների փոխազդեցության արդյունք, որը որոշում է երեխայի գերակա ձեռքը, շարժողական կողմնորոշումը և նեյրոհոգեբանական առանձնահատկությունները: Սոցիալ-հոգեբանական առումով ձախլիկությունը կարող է ազդեցություն ունենալ երեխայի սոցիալական հարմարման, ինտեգրացիայի և հաղորդակցման առանձնահատկությունների զարգացման վրա:
2. Ձախլիկությունը հանդես է գալիս ոչ միայն որպես նեյրոֆիզիոլոգիական տարբերակ, այլև որպես մանկավարժական միջամտություն պահանջող սոցիալ-մշակութային երևույթ: Ուսումնական միջավայրում այն դրսևորվում է ճանաչողական, էմոցիոնալ և հաղորդակցական առանձնահատկությունների ամբողջությամբ, որոնք պայմանավորում են հարմարման ընթացքի խոցելիությունը: Նման առանձնահատկությունների անտեսումը հանգեցնում է ապահարմարման ռիսկերի բարձրացման, ուսումնական մոտիվացիայի անկման և ինքնագնահատականի խաթարման:
3. Ձախլիկ երեխաների սոցիալական հարմարումն ընտանիքում պայմանավորված է ծնողական վերաբերմունքի, դաստիարակության ոճերի և ընտանեկան միջավայրում ձևավորվող փոխհարաբերությունների առանձնահատկություններով: Աջակցության, ըմբռնման և անհատական մոտեցման բացակայության դեպքում կարող են ի հայտ գալ ապահարմարման ռիսկեր, մինչդեռ հոգատար և ընդունող միջավայրը նպաստում է նրանց ինքնագնահատականի բարձրացմանը, հաղորդակցական հմտությունների զարգացմանը և սոցիալական լիարժեք ներառմանը:
4. Ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարումը հանրակրթական դպրոցում տեղի է ունենում բազմաչափ և բարդ դինամիկայի մեջ՝ փոխկապակցված լինելով ինչպես երեխայի նյարդահոգեբանական կառուցվածքի, այնպես էլ ուսումնական միջավայրի համարժեքության հետ: Գերակշռող նորմատիվ և

ստանդարտացված մոտեցումները դժվարացնում են նրանց ներառումը՝ սրում կրթական անհավասարությունները:
5. Դպրոցում և լրացուցիչ կրթության միջավայրում ձախլիկների նկատմամբ կիրառվող մոտեցումների անհամաչափությունը հանգեցնում է դաստիարակչական հետևողականության բացակայության: Հատկապես հաճախակի են ընտանիք-դպրոց վերադաստիարակման փորձերը և մեթոդական թերությունները դպրոցում: Միայն միջինստիտուցիոնալ համագործակցությունը հնարավոր կդարձնի լիարժեք սոցիալ-մանկավարժական հարմարումը:
6. Հետազոտությամբ վավերացվել է, որ ձախլիկների կրթական ներառումը հնարավոր է միայն այն պայմաններում, երբ իրականացվում են ուսուցման անհատականացում, միջավայրի զգայական հարմարեցում և մանկավարժների մասնագիտական իրազեկում՝ նյարդահոգեբանական և լատերալ առանձնահատկությունների վերաբերյալ: Կիրառվող մեթոդների արդիականացումն ու ստեղծագործական լուծումները նպաստում են ոչ միայն սոցիալական հարմարմանը, այլև ուսումնական ներուժի բացահայտմանը:
7. Սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը վկայում է, որ դպրոցական միջավայրը դեռևս թերանում է ձախլիկության լիարժեք ընկալման հարցում, և առկա է մանկավարժական բաց վերապատրաստման և մեթոդական վերազինման նկատմամբ: Այս հանգամանքը կարևոր ռազմավարական ռեսուրս է կրթական քաղաքականության մեջ՝ սովորողների տարբերությունների հաշվառման և ներառականության զարգացման տեսանկյունից:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. **Խլոպուզյան Ա.,** Ձախլիկների հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները, «Մխիթար Գոշ», 2016, 2(45), էջ 69-72:
2. **Խլոպուզյան Ա.,** Историческая трансформация отношения к леворуким детям, Մխիթար Գոշ, 2019, 2, էջ 34-39:
3. **Խլոպուզյան Ա.,** Ձախլիկության դրսևորման կենսագենետիկական հիմքերը. ժառանգականություն, «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, 2021, 3(1), էջ 254-260:
4. **Հարությունյան Ն., Խլոպուզյան Ա.,** Ձախլիկության ախտորոշումը եվ առաջատար ձեռքը որոշելու ուղիները, «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, 4(2), 2022, էջեր 24-31
5. **Խլոպուզյան Ա.,** Ձախլիկ սովորողների արդյունավետ ուսուցման հոգեբանամանկավարժական պայմանները, «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, 2023, 5(2), էջ 113-121:
6. **Խլոպուզյան Ա.,** Ձախլիկության ախտորոշման եվ հարմարման խնդիրների վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն, «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, 2025, 7(1), էջ 53-64:
7. **Խլոպուզյան Ա.,** Ընտանեկան միջավայրի ազդեցությունը ձախլիկ երեխաների սոցիալական հարմարման գործընթացում, «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, 2025, 7(2), էջ 242-249:

ХЛОПУЗЯН АНАИТ ГРАНТОВНА

СОЦИАЛЬНО-ПЕДАГОГИЧЕСКАЯ АДАПТАЦИЯ ЛЕВОРУКИХ ДЕТЕЙ В СИСТЕМЕ ОБЩЕГО ОБРАЗОВАНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01. "Теория и история педагогики".

Защита диссертации состоится 23 января 2026 года в 14^{00} на заседании специализированного совета 058 по Педагогике Комитета по высшему образованию и науке РА, действующем при Ереванском Государственном Университете.

Адрес: РА, 0025, г. Ереван, улица Абовяна 52А, корпус 8 ЕГУ, аудитория 208.

РЕЗЮМЕ

Актуальность темы: Современные реформы и процессы модернизации в системе общего образования требуют индивидуализированного подхода к развитию каждого ребёнка с учётом его личностных и психологических особенностей. В данном контексте особенно актуальной становится задача сохранения и развития индивидуальности ребёнка, которая должна рассматриваться как приоритетная в образовательной практике.

В современной педагогической науке, где центральное внимание уделяется изучению индивидуальных особенностей и психологических характеристик учащихся, леворукие дети требуют применения специализированных образовательных и воспитательных стратегий, учитывающих их уникальные потребности и особенности.

Цель исследования: Цель исследования заключается в комплексном изучении и аналитическом осмыслении особенностей социально-педагогической адаптации леворуких детей в общеобразовательной школе с выявлением ключевых факторов и условий, оказывающих влияние на процесс адаптации.

Задачи исследования

Исходя из сформулированной цели, были определены следующие исследовательские задачи:

1. Дать научное определение леворукости как биогенетического и социального явления.
2. Определить особенности леворукости в контексте социально-педагогической адаптации.
3. Исследовать и проанализировать вопросы социальной адаптации леворуких детей в семейной среде.
4. Изучить и проанализировать процесс социально-педагогической адаптации леворуких детей в условиях общеобразовательной школы.

5. Рассмотреть особенности обучения леворуких учеников и педагогические подходы, применяемые в образовательном процессе.
6. Обосновать социально-педагогические условия, способствующие успешной интеграции леворуких детей в ученическую среду.
7. Провести социологические исследования по проблемам социально-педагогической адаптации леворуких детей и выполнить аналитическую обработку полученных данных.

Научная новизна исследования

1. Научная новизна исследования заключается в комплексном анализе проблем социально-педагогической адаптации леворуких детей, объединяющем теоретические и эмпирические аспекты.
2. Проведён анализ текущей ситуации, выявлены трудности адаптации, рассмотрены их социальные, психологические и педагогические проявления.
3. Сопоставление результатов социологических опросов с выводами теоретических источников позволило обосновать комплексные механизмы и специфику социально-педагогической адаптации леворуких **детей.**

Теоретическая значимость: Теоретическая значимость исследования заключается в систематизированном и многогранном изучении процесса социально-педагогической адаптации леворуких детей на основе профессиональных и научных источников, с анализом различных точек зрения и формированием авторских подходов.

Практическая значимость: Практическая значимость работы определяется выявленными педагогическими особенностями и предложенными условиями эффективной адаптации леворуких учеников. Полученные материалы могут использоваться педагогами для разработки программ социально-педагогической поддержки леворуких детей, а также представляют интерес для всех, кто изучает данный аспект образовательной практики.

Структура и объём диссертации: Диссертация включает введение, три главы, заключения, 31 таблицу, 31 рисунок, список литературы и приложения. Общий объём работы составляет 151 печатные страницы.

ANAHIT H. KHLOPUZYAN
SOCIAL-PEDAGOGICAL ADAPTATION OF LEFT-HANDED CHILDREN IN GENERAL EDUCATION SCHOOLS

The dissertation for the degree of Candidate of Pedagogical Sciences in the specialty 13.00.01 – «Theory and History of Pedagogy» will be defended on 23th january 2026, at 14^{00} at the session of Specialized Council 058 on Pedagogy of the Committee on Higher Education and Science of the Republic of Armenia, operating at Yerevan State University.

Address: Republic of Armenia, 0025, Yerevan, Abovyan str. 52a, 8th building of Yerevan State University, room 208.

SUMMARY

Relevance of the Topic: Contemporary reforms and modernization processes within general education necessitate an individualized approach to the development of each child, taking into account their personal and psychological characteristics. In this context, preserving and fostering the child's individuality becomes a priority within educational practice.

In modern pedagogical theory, which emphasizes the study of students' individual and psychological traits, left-handed children require specialized instructional and educational strategies that acknowledge and accommodate their unique characteristics.

Purpose of the research: The aim of this study is to conduct a comprehensive examination and analytical assessment of the social-pedagogical adaptation of left-handed children in general education schools, identifying the key factors and conditions that influence the adaptation process.

Research Objectives:

Based on the stated aim, the following research objectives have been established:

1. To define left-handedness as a biogenetic and social phenomenon.
2. To determine the characteristics of left-handedness in the context of social-pedagogical adaptation.
3. To investigate and analyze issues related to the social adaptation of left-handed children within the family environment.
4. To study and analyze the process of social-pedagogical adaptation of left-handed children in general education schools.
5. To examine the learning characteristics of left-handed students and the pedagogical approaches applied in the educational process.
6. To substantiate the social-pedagogical conditions that facilitate successful integration of left-handed children into the student community.

7. To conduct sociological research regarding the social-pedagogical adaptation of left-handed children and perform analytical processing of the results.

Scientific Novelty of the research:

1. The scientific novelty of the study lies in the comprehensive analysis of the social-pedagogical adaptation of left-handed children, integrating both theoretical and empirical perspectives.

2. The study includes an assessment of the current situation, identification of adaptation difficulties, and consideration of their social, psychological, and pedagogical manifestations.

3. Correlating the results of sociological surveys with theoretical findings has enabled the substantiation of comprehensive mechanisms and characteristics of social-pedagogical adaptation of left-handed children.

The theoretical Significance of the research:

The theoretical significance of the study lies in the systematic and multifaceted examination of the social-pedagogical adaptation process of left-handed children, based on professional and scientific sources, presenting various scholarly perspectives and formulating original approaches.

The practical Significance of the research: The practical significance of the study is determined by the identified pedagogical features and proposed conditions for effective adaptation of left-handed students. The findings can be used by educators to design social-pedagogical support programs for left-handed children and serve as a reference for researchers and practitioners interested in this aspect of educational practice.

The structure and Volume of the dissertation: The dissertation consists of an introduction, three chapters, conclusions, 31 tables, 31 figures, a list of references, and appendices. The total length of the dissertation is 151 pages.